Կարգապահական գործ ԿԳ-14161

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հուլիսի 15-ի թիվ 124-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/81-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ԲԱԼՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Սարդարյանի, Լուսինե Սահակյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Ռուբեն Բալոյանին (արտոնագիր թիվ 1115) **(այսուհետ՝ նաև Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանը և Լուսինե Հակոբյանը դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ ներկայացրել են փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից Վարդան Պետրոսյանի գործի քննության ընթացքում և այդ գործի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով արված հայտարարությունները, որոնցով ըստ դիմողի ներկայացուցիչների հիմնավորվում է փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից վարքագծի կանոնների մի շարք խախտումներ և խնդրել են վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցել:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.11.2014թ. թիվ 406-Ա/ԿԳ-14161 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Ռուբեն Բալոանի նկատմամբ՝ Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Կարգապահական գործը 02.12.2014թ. հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան՝ Գևորգ Դավթյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմող՝ Անի Համելը փաստաբան Ռուբեն Բալոյանին մեղադրում է առերևույթ հետևյալ վարքագիծը դրսևորելու մեջ.

- փաստաբան Ռուբեն Բալոյանը Վարդան Պետրոսյանի գործի քննության ընթացքում և այդ գործի վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցներով արված արտահայտություններով թույլ է տվել Փաստաբանի վարքագծի կանոնագրքով սահմանված 2.2.3, 2.6.1, 3.7.1, 4.1, 4.3, 5.1.2 և 5.2.11 ենթակետերի կանոնների խախտումներ: Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի կանոնների խախտման հատկանիշների հիմքում դրվել է Դիմողի կողմից վկայակոչված www.NEWS.am կայքում 23.05.2014թ. «Կարծես թե անհրաժեշտություն կա դերասանի փաստաբաններին բացատրել Քրեական օրենսդրությունը» հրապարակումը, որում, ըստ դիմողի, տրվել է Պատասխանողի հետևյալ խոսքերը, մեջբերում. «20-30 էջ է դեռ հատազոտվել, փաստաբանն ինչ իրավունքով է գնահատական տալիս, ոչ մեկը չի կարող ներկա պահին գնահատականներ տալ, ամեն ինչ իր ժամանակն ունի: Նման իրավունք ոչ մեկը չունի. Ոչ Նիկոլայ Բաղդասարյանը, որը միջնորդության ժամանակ ցուցմունքներ է ներկայացնում, ոչ էլ Ֆրանսիացի փաստաբանը: Կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել քրեական օրենսդրությունը:»:

Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Պատասխանողը 27.01.2015թ. գործը նախապատրաստող անձ, փաստաբան Գևորգ Դավթյանին ներկայացված բացատրությունում, մասնավորապես՝ վերջինիս այն հարցին թե՝ արդյոք ճիշտ է www.NEWS.am ինտերնետային կայքում հրապարակված այն հարցազրույցը, որում դուք հարց ու պատասխանի ժամանակ ասել եք, որ. «*20-30 էջ է դեռ հետազոտվել, փաստաբանն ինչ իրավունքով է գնահատական տալիս, ամեն ինչ իր ժամանակն ունի: Նման իրավունք ոչ մեկը չունի, ոչ Նիկոլայ Բաղդասարյանը, որը միջնորդության ժամանակ ցուցմունքներ է ներկայացնում, ոչ էլ Ֆրանսիացի փաստաբանը: Կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել քրեական օրենսդրությունը*», պատասխանել է հետևյալը. «*Ճիշտ է նման հրապարակումը համապատասխանում է իրականությանը, սակայն ես արտահայտել եմ իմ կարծիքը, հետևյալ ձևավորմամբ. «կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել քրեական օրենսդրությունը», որը ոչ այլ ինչ է քան ազատ կարծիք և հարց: Դրանով ես նպատակ չեմ հետապնդել նրանց վիրավորելու: Բացի դա նշեմ, որ դատական նիստի ժամանակ, դատաքննությունը դեռ չսկսված, եթե չեմ սխալվում, կամ սկզբնական փուլում, երբ դեռ որևէ անձ ցուցմունք չէր տվել Ն.Բաղդասարյանը հանդես եկավ միջնորդությամբ, որի ժամանակ սկսեց հրապարակել գործով վկաների ցուցմունքեր: Ես հայտարարեցի, որ ինքը իրավունք չունի հրապարակել գործով դեռևս չհարցաքննված անձանց ցուցմունքներ: Նրան դիտողություն արեց նաև դատարանը: Մինչդեռ շարունակելով միջնորդությունը Բաղդասարյանը կրկին անգամ հրապարակեց գործով դեռևս չհարցաքննված անձանց ցուցմունքները: Ես նորից դիմեցի դատարանին և դատարանը կրկին անգամ Բաղդասարյանին դիտողություն արեց, որ չհրապարակի ցուցմունքներ: Ի պատասխան*

դատարանի դիտողությանը Բաղդասարյանն ասեց,- հիմա լավ չեմ հիշում, «բա ոնց անեմ», կամ «բա ոնց ասեմ»: Ես էլ նրան ասացի, բացատրեցի թե ոնց, բայց մեկ է ինքը նույն ոճով շարունակեց և առայսօր էլ շարունակում է աշխատել: Այս ամենի հեղինակը Նիկոլայ Բաղդասարյանն է, նա է հրահրում Պետրոսյանների հարազատներին իմ դեմ բողոքներ գրելու: Ես Վ. Պետրոսյանի կնոջը չեմ վիրավորել, նրանց հարազատների հետ լեզու չեմ թրջել, բացառությամբ Արամի, որն էլ ինձ քաղ. հայցը ներկայացնելուց առաջ կուլտուրական հասկացրեց, որ տուժող կողմին գումար են տվել և եթե ես այդ մասին տեղյակ չեմ, ուրեմն նրանք ինձ չեն վստահում: Եթե ես Բաղդասարյանին եմ վիրավորել, թող նա դիմեր պալատին և ոչ թե Անի Համելը, որին ես չեմ ճանաչում և նրա հետ բառ փոխանակած չկամ:

Չեմ հասկանում իմ ասածից ոչ Բաղդասարյանն է վիրավորվել, ոչ էլ Մարի Դոզեն, իսկ թե ինչու է մեկ այլ անձ դիմում պալատին, որ ես Բաղդասարյանին վիրավորել եմ, ինձ համար անհասկանալի է:»:

Պատասխանողը 09.02.2015թ. նույնաբովանդակ դիմում է ներկայացրել նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին:

Խորհրդի նիստում Պատասխանողը պնդել է գրավոր բացատրություններում նշված փաստական հանգամանքները, ավելացնելով, որ որևէ կերպ չի ցանկացել վիրավորել փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին:

<u>3.3. Վկաների ցուցմունքները</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին</u>

Կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ, փաստաբան՝ Գևորգ Դավթյանը02.06.2015թ. կազմել է եզրակացություն, հետևյալ բովանդակությամբ.

Այսպես՝ «Սույն կարգապահական գործում առա այն տեղեկատվությունը, որոնք վերաբերում են փաստաբանի վարքգծի կանոնագրքով սահմանված 2.2.3, 2.6.1 , 3.7.1, 4.1, 4.3 կետերի հիմքում դիմողի կողմից բերված հանգամանքներին, չեն կարող ընդունվել նախապատրաստաստողիս համար, քանզի դրանց վերաբերյալ վարույթի հարուցումը մերժված է, դրանք դուրս են սույն գործի քննության շրջանակներից և որևէ նշանակությաև չունեն գործի լուծման ելքի համար, ինչով պայմանավորված վերջիններս ինչպես ոչ վերաբերելի, այնպես էլ անթույլատրելի:

3.2. Գործում առկա դիմողի այն փաստարկները , որոնք վերաբերում են www.NEWS.am կայքում հրապարակված այն հատվածին, համաձայն որի Պատասխանողը ասել է «Այո, Ն. Բաղդասարյանը ասել է, որ տուժողներին ինչ պետք է կտան, բայց պայմանով, որն Արթուր Հակոբյանը դատարանում ցուցմունք տա, որ Նիվա մեքենան հետընթաց է վարել և փակել Վարդան Պետրոսյանի ավտոմեքենայի դիմացը: Ես Ն.Բաղդասարյանին ասել եմ, որ դա անբարո առաջարկ է, բայց ես դրա մասին կհայտնեմ Ա.Հակոբյանին: Տուժողներին խիստ վրդովվեցրեց նաև այս առաջարկը վերաբերելի չեն, քանզի Պալատի նախագահի որոշմամբ վարույթ հարուցելու հիմքում դրանք բացակայում են, իսկ Դիմողի արված այդ մեջբերումը ամբողջական չէ, այլ ունի շարունակություն:

3.3. Գործում առկա դիմողի մյուս այն փաստարկը, որը վերաբերում է <u>www.NEWS.am</u> կայքում հրապարակված մյուս հատվածին, համաձայն որի «Այս ամենը

հորինել է Ն. Բաղդասարյանը» նույնպես վերաբերելի չեն, քանզի դա ևս Պալատի նախագահի որոշմամբ վարույթ հարուցելու հիմքում բացակայում է, բացի այդ, Դիմողի արված մեջբերումը նույնպես ամբողջական չէ:»:

Կարգապահական վարույթի գործը նախապատրաստողն եզրահանգել է հետևյալը.

«Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով §Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39[1] հոդվածի 1-ին կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի մասին» իրավական ակտի 13-րդ հոդվածի 2-րդ ենթակետերով և 22-րդ հոդվածով՝

Նախապատրաստողիս կողմից կազմվեց սույն եզրակացությունը, որի 2-րդ և 3-րդ կետերում արտացոլված է ինչպես սույն գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը, այնպես էլ ոչ վերաբերելի և/կամ անթույլատրելի հանգամանքները:»:

Եզրակացության վերաբերյալ առարկություններ չեն ներկայացվել:

2015 թվականի փետրվարի 15-ին կարգապահական գործը և նախապատրաստողի եզրակացությունը հանձնվել են Խորհրդին:

Խորհրդի նիստը նշանակվել է 2014 թվականի մայիսի 20-ին ժամը 19:15-ին, որը սակայն հետաձգվել է:

Խորհրդի նշանակված հաջորդ նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հուլիսի 15-ին, ժամը՝ 19:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվել է թիվ ԿԴ/0026/01/14 քրեական գործն ըստ մեղադրանքի Վարդան Եղիշի Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով: Այդ գործով փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը մասնակցել է, որպես ամբաստանյալ՝ Վարդան Պետրոսյանի պաշտպան, իսկ փաստաբան Ռուբեն Բալոյանը՝ տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ:

2) NEWS.am ինտերնետային կայքում 23.05.2014թ. հրապարակվել է «*Կարծես թե անհրաժեշտություն կա դերասանի փաստաբաններին բացատրել Քրեական օրենսդրությունը»* վերնագրով հոդվածը, հետևյալ բովանդակությամբ. «*Ի՞նչ իրավունքով է հայտնի դերասան Վարդան Պետրոսյանի փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը գնահատականներ տալիս, երբ ընդամենը գործի 20-30 էջն է հետազոտվել: Տուժող կողմի՝ Հակոբյանների փաստաբան Ռուբեն Բալոյանը NEWS.am-ի հետ զրույցում ասաց, որ դերասանի փաստաբաններին կարծես թե կարիք կա Քրեական օրենսդրություն բացատրելու:*

«20-30 էջ է դեռ հետազոտվել, փաստաբանն ի՞նչ իրավունքով է գնահատական տալիս,

ոչ մեկը չի կարող ներկա պահին գնահատականներ տալիս, ամեն ինչ իր ժամանակն ունի: Նման իրավունք ոչ մեկը չունի. ոչ Նիկոլայ Բաղդասարյանը, որը միջնորդության ժամանակ ցուցմունքներ է ներկայացնում, ոչ էլ ֆրանսիացի փաստաբանը: Կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել Քրեական օրենսդրությունը,- ասաց նա:»:

3) Պատասխանողը 27.01.2015թ. գրված բացատրությունով ընդունել է NEWSam ինտերնետային կայքում հրապարակված փաստական հանգամանքները, նշելով հետևյալը. «*Ճիշտ է նման հրապարակումը համապատասխանում է իրականությանը, սակայն ես արտահայտել եմ իմ կարծիքը, հետևյալ ձեվավորմամբ. «կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել քրեական օրենսդրությունը», որը ոչ այլ ինչ է քան ազատ կարծիք և հարց: Դրանով ես նպատակ չեմ հետապնդել նրանց վիրավորելու:*»:

<u>6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 09.04.2015թ. տրամադրված թիվ ԸԴՂ/ԿԳ/221-15 տեղեկանքի համաձայն Ռուբեն Բալոյանի (արտոնագիր 1115, տրված՝ 16.10.2010թ.) նկատմամբ 2010-2015թթ. ընկած ժամանակահատվածում 1 անգամ է հարուցվել (22.07.2014թ. հարուցված թիվ 271-Ա/ԿԳ-14101 համարով) կարգապահական վարույթ (նշում նույն տեղեկանքից՝ «Սույն թվի մեջ չի հաշվարկվում ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.11.2014թ. թիվ 406-Ա/ԿԳ-14161 որոշմամբ հարուցված կարգապահական գործը:»): Խորհրդի 18.03.2018թ. թիվ ԿԳ/38-Ա որոշմամբ կարգապահական վարույթը կասեցվել է:

<u>7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ հարուցված սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես.՝Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ՝ Տիգրան Էդուարդի Եգորյանի և Լուսինե Տարիելի Հակոբյանի դիմումի հիման վրա ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.11.2014թ. թիվ 406-Ա/ԿԳ-14161 որոշմամբ՝ փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր՝ թիվ 1115) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 5.1.2. և 5.2.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով (կարգապահական գործ՝ թիվ ԿԳ-14161)

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 5.1.2 ենթակետի՝ «*Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:*»:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 5.2.1 ենթակետի՝ «*Փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ*»:

Այսինքն՝ փաստաբանի կողմից մյուս բոլոր փաստաբանների հանդեպ իր գործունեության ընթացքում քաղաքավարի վերաբերմունք չցուցաբերելն ու փաստաբանի նկատմամբ՝ արժանապատվությունն ու փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ տալը հանգեցնում է «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» խախտման:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել նշված նորմերի կիրառման համար

անհրաժեշտ փաստակազմը.

արդյո՞ք Պատասխանողն իր կողմից կատարված հայտարարությամբ ոչ քաղաքավարի վերաբերմունք է ցուցաբերել փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ,

արդյո՞ք Պատասխանողը թույլ է տվել Նիկոլայ Բաղդասարյանի նկատմամբ՝ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:

Պատասխանողը 27.01.2015թ. գործը նախապատրաստող անձ, փաստաբան Գևորգ Դավթյանին ներկայացված բացատրությունում, մասնավորապես՝ վերջինիս այն հարցին թե՝ արդյոք ճիշտ է www.NEWS.am ինտերնետային կայքում հրապարակված այն հարցազրույցը, որում դուք հարց ու պատասխանի ժամանակ ասել եք, որ. «*20-30 էջ է դեռ հետազոտվել, փաստաբանն ինչ իրավունքով է գնահատական տալիս, ամեն ինչ իր ժամանակն ունի: Նման իրավունք ոչ մեկը չունի, ոչ Նիկոլայ Բաղդասարյանը, որը միջնորդության ժամանակ ցուցմունքներ է ներկայացնում, ոչ էլ Ֆրանսիացի փաստաբանը: Կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել քրեական օրենսդրություն*», պատասխանել է հետևյալը. «*Ճիշտ է նման հրապարակումը համապատասխանում է իրականությանը, սակայն ես արտահայտել եմ իմ կարծիքը, հետևյալ ձեվավորմամբ. «կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել քրեական օրենսդրությունը», որը ոչ այլ ինչ է քան ազատ կարծիք և հարց: Դրանով ես նպատակ չեմ հետապնդել նրանց վիրավորելու: Բացի դա նշեմ, որ դատական նիստի ժամանակ, դատաքննությունը դեռ չսկսված, եթե չեմ սխալվում, կամ սկզբնական փուլում, երբ դեռ որևէ անձ ցուցմունք չէր տվել Ն. Բաղդասարյանը հանդես եկավ միջնորդությամբ, որի ժամանակ սկսեց հրապարակել գործով վկաների ցուցմունքեր: Ես հայտարարեցի, որ ինքը իրավունք չունի հրապարակել գործով դեռևս չհարցաքննված անձանց ցուցմունքներ: Նրան դիտողություն արեց նաև դատարանը: Մինչդեռ շարունակելով միջնորդությունը Բաղդասարյանը կրկին անգամ հրապարակեց գործով դեռևս չհարցաքննված անձանց ցուցմունքները: Ես նորից դիմեցի դատարանին և դատարանը կրկին անգամ Բաղդասարյանին դիտողություն արեց, որ չհրապարակի ցուցմունքներ: Ի պատասխան դատարանի դիտողությանը Բաղդասարյանն ասեց,- հիմա լավ չեմ հիշում, «բա ոնց անեմ», կամ «բա ոնց ասեմ»: Ես էլ նրան ասացի, բացատրեցի թե ոնց, բայց մեկ է ինքը նույն ոճով շարունակեց և առայսօր էլ շարունակում է աշխատել: …….*

Եթե ես Բաղդասարյանին եմ վիրավորել, թող նա դիմեր պալատին և ոչ թե Անի Համելը, որին ես չեմ ճանաչում և նրա հետ բառ փոխանակած չկամ:

Չեմ հասկանում իմ ասածից ոչ Բաղդասարյանն է վիրավորվել, ոչ էլ Մարի Դոզեն, իսկ թե ինչու է մեկ այլ անձ դիմում պալատին, որ ես Բաղդասարյանին վիրավորել եմ, ինձ համար անհասկանալի է:»:

Պատասխանողը 09.02.2015թ. նույնաբովանդակ դիմում է ներկայացրել նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին:

Խորհրդի նիստում Պատասխանողը պնդել է գրավոր բացատրություններում նշված փաստական հանգամանքները, ավելացնելով, որ որևէ կերպ չի ցանկացել վիրավորել փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին, ընդամենը փորձել է կասեցնել վերջինիս անօրինական գործողությունները, երկու անգամ ինքն է դիտողություն արել, մեկ անգամ՝ դատական նիստը նախագահող դատավորը: Եվ միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմն իր կողմից հրապարակվելուց հետո Նիկոլայ բաղդասարյանը դադարեցրեց դատաքննության ընթացքում դեռ

ցուցմունք չտրված անձանց գրավոր ցուցմունքները հրապարակելը: Ընդ որում այդ ամենը կատարվել է դատական նիստի ընթացքում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ «Փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ բացակայում է կարգապահական խախտման դեպքը.

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով բացակայում է խախտման դեպքը: Դատական նիստի ընթացքում փաստաբանների միջև առաջացած բանավեճը գործի շրջանակներում հաստատված փաստերի լույսի ներքո դիտարկելիս, ինչպես նաև նկատի ունենալով Պատասխանողի դիրքորոշումը իր կողմից հնչեցրած արտահայտությունների վերաբերյալ խորհուրդը գնահատում է այն որպես դատավարական ընթացակարգային բնույթ ունեցող, որպեսզի պայմաններում էլ պատասխանողի արարքը չի կարող բավարարել Կանոնագրքի 5.1.2, 5.2.1. կետեր որվ սահմանված արգելվող արարքի հատկանիշներին»:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով ,Փաստաբանության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14-րդ կետի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ ,Փաստաբանների պալատի կանոնադրությանե 16.26-րդ կետի, ,Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգիե 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 27.11.2014 թվականի թիվ 406-Ա/ԿԳ-14161 որոշմամբ փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր թիվ 1115 նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:***

2. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Ռուբեն Բալոյանին և Դիմողին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
նիստը նախագահող՝ **Տիգրան Խուրշուդյան**